ԳԵՎՈՐԳ ԲԱԳՐԱՏԻ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ
(ծննդյան 70-ամյակի առթիվ)

Լրացավ հայրենական պատմական գիտության ներկայացուցիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ, Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Գ. Բ. Ղարիբջանյանի ծննդյան 70-ամյակը։

Գ. Բ. Ղարիբջանյանը ծնվել է 1920 թ. Ալեքսանդրապոլում (այժմ՝ Լենինական), հեղափոխական ուսուցչի ընտանիքում։ Սկզբնական կրթությունը ստացել է ծննդավայրում, ապա 1937 թ. Երևանում ավարտելով միջնակարգ դպրոցը, նույն տարում ընդունվել է և մինչև 1941 թ. սովորել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում։ Երբ սկսվում է Հայրենական մեծ պատերազմը, նա ընդհատում է ուսումը, կամավոր մտնում խորհրդային բանակի շարքերը և մեկնում ճակատ։ 1943 թ. Արևմտյան ճակատում վիրավորվում է, բուժվելուց հետո մինչև 1948 թ. ծառայում է բանակում, որպես ռազմական թղթակից։ 1945 թ. դեկտեմբերին, պատերազմի ավարտից հետո, Երևանի պետական համալսարանում հանձնելով պետական քննությունները, շարունակում է սովորել ասպիրանտուրայում։ 1948 թ. մայիսին պաշտպանում է թեկնածուական դիսերտացիա։ 1955 թ. հունիսին պաշտպանում է դոկտորական դիսերտացիա, ստանում պրոֆեսորի կոչում։ Այդ տարիներին՝ 1948—1950 թթ. Նա աշխատել է ՀԿԿԵՄ Կենտկոմի պրոպագանդայի և ագիտացիայի գծով քարտուղար, իսկ 1951—1954 թթ.՝ կուսպատմության ինստիտուտի հայկական մասնաճյուղի բաժնի վարիչ։ 1955—1961 թթ. Գ. Ղարիբջանյանը աշխատել է ՀԿԿ Կենտկոմի դպրոցական բաժնի վարիչ, ապա գիտության, կուլտուրայի և ուսումնական հաստատությունների բաժնի վարիչի տեղակալ։ 1961 թ. օգոստոսից մինչև 1968 թ. սեպտեմբեր աշխատել է ՀԿԿ Լենինականի քաղկոմի առաջին քարտուղար, իսկ 1968 թ. մինչև 1977 թ.՝ ԽՄԿԿ Կենտկոմի Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի տնօրեն։ 1977—1982 թթ. Գ. Ղարիբջանյանը ընտրվում է Հայկական ԽՍՀ ԳԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, իսկ դրանից հետո գլխավորում է Պատմության ինստիտուտի Հայ հասարակական մտքի և մամուլի բաժինը։ Այժմ նա ՀԽՍՀ ԳԱ գիտական ինֆորմացիայի և հասարակական գիտությունների կենտրոնի տնօրենն է։

Սկսած 1947 թ. Գ. Ղարիբջանյանը գիտական և հասարակական գործունեությանը զուգընթաց աշխատել է Երևանի պետական համալսարանում, եռամյա կուսակցական դպրոցում, Երևանի բժշկական ինստիտուտում, Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի Լենինականի մասնաճյուղում և ՀԿԿ Երևանի քաղկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի համալսարանում։ Դասախոսել է ԽՄԿԿ պատմություն, խորհրդային մամուլի և ռուս լրագրության պատմություն, հայ ժողովրդի պատմություն։

Ակադ. Գ. Ղարիբջանյանի գրչին են պատկանում շուրջ 300 գիտական աշխատություններ, այդ թվում 60 մենագրություններ՝ մարքս-լենինյան գիտության, Հայաստանի և Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների և հեղափոխական շարժումների, ազգային հարցի, միջազգային կոմունիստական և բանվորական շարժման և հայ ժողովրդի նոր ու նորագույն շրջանի պատմության մասին։ Այդ աշխատություններն, անշուշտ, զերծ չեն ժամանակի սխալներից ու թերություններից, առանձին երևույթների լուսաբանման միակող-

մանիությունից։ Գ. Ղարիբջանյանը Պատմության ինստիտուտի բազմահատորյակի (ռուսերեն) հեղինակային կոլեկտիվի և խմբագրական կոլեգիայի անդամ է և ջանասեր աշխատանք է կատարում հայ ժողովրդի անցյալի ու ժամանակակից պատմության հիմնահարցերի նորովի լուսաբանման գործում։ Վերջին տարիներին նա հրատարակել է մի շարք գրքեր՝ «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին» (1986), «Ակնարկներ հայ-բուլգարական բարեկամության պատմության» (1980), «Ավետիք Իսահակյան» (1985), «Ժողովրդական հերոս Անդրանիկը» (1986), «Ավարայրից մինչև Սարդարապատ» (1988), «Հայկական ցեղասպանությունը և համաշխարհային հասարակայնությունը» (1989) և այլն։ Նշենք, որ նրա վերջին տարիների աշխատությունները աչքի են ընկնում աղբյուրագիտական լայն ընդգրկումով և փաստերի ուրույն մեկնաբանություններով։ Ակադեմիկոս Գ. Ղարիբջանյանը մեծ վաստակ ունի հատկապես հայագիտական որակյալ կադրերի պատրաստման գործում։ Նրա ղեկավարությամբ ասպիրանտուրա են ավարտել և գիտական կոչումներ են ստացել բազմաթիվ երիտասարդ գիտական աշխատողներ։ 1960—1964 թթ. նա եղել է ԽՍՀՄ բարձրագույն ատեստացիոն հանձնաժողովի էքսպերտ, իսկ 1965—1976 թթ.՝ ԽՍՀՄ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրությանը կից էքսպերտ հանձնաժողովի անդամ և ջանք չի խնայել հայագիտական աշխատությունները ինչպես հարկն է այնտեղ ներկայացնելու գործում, 1976—1988 թթ. նա եղել է Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի գիտության և տեխնիկայի բնագավառի պետական մրցանակի հանձնաժողովի անդամ և տչքի է ընկել իր սկզբունքայնությամբ և գիտական բարեխղճությամբ։ 1971 թ. Գ. Ղարիբջանյանը գիտական շրջանառության մեջ գրեց Կ. Լիբկնեխտի և Ռ. Լյուքսեմբուրգի հոդվածները հայկական ազգային-ազատագրական շարժումների և հատկապես Սասունի 1894 թ. ապստամբության վերաբերյալ և հրատարակեց «Կարլ Լիբկնեխտը և Ռոզա Լյուքսեմբուրգը հայ ժողովրդի մասին» (1971) աշխատությունը. հայ ընթերցողը առաջին անգամ ծանոթացավ գերմանական սոցիալ-դեմոկրատիայի երկու ականավոր ներկայացուցիչների հոդվածներին, որոնց մեջ ցույց էր տրվում Թուրքիայում ապրող հպատակ ազգերի, այդ թվում նաև հայերի ծանր ու անտանելի վիճակը։

Ռ. Լյուքսեմբուրգը այդ աշխատության մեջ այն միտքն է հայտնում, որ եվրոպական և հատկապես գերմանական մամուլի շատ մարմիններ սխալ տեղեկություններ են հայտնում այն մասին, որ եվրոպական և ռուսական պետությունների և հայ ազգային կուսակցությունների միջամտությունը խանգարում է «անմեղ գառ» սուլթանին իրագործելու հայկական գավառներում նախատեսված ռեֆորմները։ Նա բերում է փաստեր Թուրքիայում ապրող հպատակ ազգերի ծանր վիճակի մասին և միաժամանակ ի լուր աշխարհի հայտարարում, որ գերմանական սոցիալ-դեմոկրատիան Սասունի ապստամբների կողմն է։

Ակադեմիկոս Գ. Ղարիբջանյանը 1968 թվականից խորհրդա-հունգարական բարեկամության հայկական բաժանմունքի նախագահն է, Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապերի հայկական ընկերության նախագահության, «Գիտելիք» ընկերության նախագահության, Հայաստանի գրողների, ժուռնալիստների միությունների և ԽՍՀՄ փիլիսոփաների ընկերության անդամ։ Սկսած 1970 թ. Հայկական խորհրդային հանրագիտարանի և Հայ ժողովրդի պատմության բազմահատորյակի գլխավոր խմբագրության անդամ է։

Գ. Ղարիբջանյանը գիտական աշխատանքին զուգընթաց հասարակական և քաղաքական լայն աշխատանք է ծավալել Երևանում և Լենինականում, ողջ հանրապետությունում։ 1954—61 թթ. նա եղել է ՀԿԿ Կենտկոմի անդամության թեկնածու, 1961—81 թթ. ՀԿԿ Կենտկոմի անդամ, իսկ 1965—1969 թթ. ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի անդամության թեկնածու էր։ Ընտրվել է ԽՄԿԿ XII և XIII համագումարների պատգամավոր, եղել է Հայաստանի կոմկուսի XIV և XVI համագումարների պատգամավոր։ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի VI և VII գումարման դեպուտատ։ Գ. Ղարիբջանյանը առաջիններից մեկն էր, որ իր գրիչը նվիրեց հայ ազգային-ազատագրական շարժման հարցերի պարզաբանմանը։ Նա «Զորավար Անդրանիկ» հայոց համազգային միության պատվավոր նախագահն է։ Գիտական և հասարակական լայն գործունեության համար պարգևատրվել է «Աշխատանքային կարմիր դրոշի» երկու, «Ժողովուրդների բարեկամության», «Պատվո նշան» շքանշաններով և մի շարք մեդալներով։

Ակադ. Գ. Ղարիբջանյանը իր ստեղծագործական մտահղացումների իրագործման ուղիներում նոր և թարմ աբելիքներ ունի իր ընթերցողներին։ Մաղթենք նրան քաջառողջություն և հաջողություններ դիտական ասպարեզում։

Գ. Մ. ԳԵՂԱՄՅԱՆ
պատմական գիտությունների դոկտոր
Հ. Մ. ՊՈՂՈՍՅԱՆ
պատմական գիտությունների դոկտոր